
ՀԵՔՏԱԹԻ ԺԱՆՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅ ԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Զ. Ռ.

Ժողովրդական բանահյուսությունն ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամրողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ դառնալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագիտության և արվեստի զարգացման համար: Բանահյուսությունը գրավոր գրականությունից տարբերվում է չորս հիմնական տարրերով՝ բանավոր գոյությամբ, հանրային (կոլեկտիվ) բնույթով, տարբերակների առկայությամբ, միաձուլությամբ (սինկրետիզմով): Բանահյուսության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ բանագիտությունը, իբրև առանձին գիտություն ձևավորվել է XIX դ. սկզբներին Գրիմ եղբայրների, հատկապես Յակոբ Գրիմի կողմից: Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ XIX դ. կեսերին հայ մտավորականությունը ևս կարևորեց մեր ժողովրդի բանավոր ավանդության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Նշյալ դարի 90-ական թվականներին հայագիտության մեջ սկսեց գործածվել «ժողովրդական բանահյուսություն» եզրույթը, և առաջ եկան բանահավաքներ, որոնք, գործ ունենալով մի շարք հասարակական երևույթների հետ, լուսաբանում էին տրվյալ դարաշրջանին հատուկ հասարակական-քաղաքական հարաբերությունները¹:

Հայկական բանահյուսության հարստության պերճախոս ապացույցներն են XIX և XX դդ. գրի առնված շուրջ 2000 հեքիաթները (տպագիր և անտիպ), 5000-7000 երգերը, մոտ 40000 առած-ասացվածքները, «Մասունցի Դավիթ» էպոսի 50-ից ավելի տարբերակները, բազմաթիվ զրույցներ, ավանդություններ և այլն²:

Հեքիաթը վիպական բանահյուսության հնագույն տեսակներից է: Այդ հարուստ և բազմազան նյութը ցույց է տալիս տարբեր ժողովուրդների բանահյուսությունների նմանությունները և համընկնումները՝ միաժամանակ զարմացնելով բովանդակության և լեզվի յուրահատկությամբ:

Ժողովրդական հեքիաթների կախարդական աշխարհը բնութագրվում է տարածաժամանակային պատկերավորությամբ, որտեղ իրողության տարրերը դիտարկվում են իրենց հատուկ շրջապատից կտրված և միմյանց միջև հաստատված նոր, անսովոր հարաբերություններով: Այսպիսով, տեղի է ունենում շեղում ճշմարտացիությունից և իրական աշխարհի օրենքների հակառակ ըմբռնում: Հեքիաթների միջոցով արտահայտվում են սոցիալական, բարոյախոսական

¹ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 12:

² Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1945, էջ 6:

բազմաթիվ կարևոր գաղափարներ ու մտքեր, որոնք հասարակական-ճանաչողական ու դաստիարակչական արժեք ունեն ոչ միայն մանուկ սերնդի, այլև բոլոր հասակի ու խավերի մարդկանց համար:

Հ. Թումանյանը գրել է. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհում, ավելի լավ երկրներում դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»³:

Հեքիաթը հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է:

Հայկական հեքիաթների հավաքման ու հրատարակման աշխատանքներին մեծապես նպաստել են Գարեգին Սրվանձտյանցը, Սարգիս Հայկունին, Տիգրան Նավասարդյանը, Երվանդ Լալայանը, Սահակ Մովսիսյանը (Բենսե) և ուրիշներ:

Հայ ժողովրդական հեքիաթների մեծագույն մասը խորապես ազգային ստեղծագործություններ են, որոնք տարբերվում են ուրիշ ժողովուրդների հեքիաթներից իրենց լեզվով, կյանքի, կենցաղի, բնության նկարագրով և հերոսների հոգեկան կերտվածքով: Դրանցում արտացոլված են հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքը, նրա աշխարհայացքն ու աշխարհզգացումը: Այս տեսակետից հայ ժողովրդական գրեթե բոլոր հեքիաթներում դրսևորված են բարու մշտական հաղթանակը չարի, լույսի հաղթանակը խավարի նրկատմամբ և ընդհանրապես կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ:

Հայ ժողովրդական հեքիաթները աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթների նման իրենց նկարագրով և իրականության արտացոլման եղանակներով միասեռ չեն: Նրանք բաժանվում են հիմնականում երեք տեսակի, որոնցից առաջինը կենդանական, երկրորդը՝ հրաշապատում, իսկ երրորդը՝ իրապատում կամ կենցաղային, երգիծական հեքիաթներն են:

Կենդանական հեքիաթները ծագել են վաղնջական ժամանակներում: Ապրելով բնության մեջ՝ մարդը հաճախ շփվում էր նաև վայրի կենդանիների հետ և տնտեսական ու այլ նկատառումներով ձրգտում էր հասկանալ նրանց լեզուն, վարքն ու բարքը, բնավորությունը: Կենդանական հեքիաթները ժողովրդի մանկության շրջանի ստեղծագործություններ են, որոնց համար բնորոշը ողջ առարկայականի և հատկապես բնության երևույթների ու կենդանիների անձնավորումն է, մարդկայնացումը: Հեքիաթներում հաճախակի հանդես եկող օձերի, ձկների, թռչունների և գազանների օգնությամբ մարդ-հերոսը հաղթահարում է բոլոր արգելքները և հասնում իր նպատակին⁴:

Ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի հեքիաթների դասական տեսակը հրաշապատում հեքիաթներն են: Դրանց հիմնական սյուժեներում ցայտուն

³ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. V, Ե., 1945, էջ 472:

⁴ Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1980, էջ 268-269:

դրսևորված են նրանց ժանրային առանձնահատկությունները, բովանդակային մոտիվները, գեղարվեստական հատկանիշները և հասարակական-գաղափարական միտվածությունը: Առանձնահատուկ բնույթ ունեն նաև հայկական հրաշապատում հեքիաթների գործող անձինք, օրինակ՝ Հազարան բլբուլը, որի երգով կանաչում է չորացած այգին, երաշտի ու չարության խորհրդանիշ վիշապ-օձը, որը, ապրելով գետերի ակունքում, խանգարում է մարդկանց օգտվելու ջրից, երեք, յոթ և ավելի գլխանի Սպիտակ, Սև և Կարմիր դևերը, չար պատավները, թռչունի թևերով և մարդկային լեզվով օժտված ծովերի կամ քարայրների մեջ ապրող հրեղեն ձիերը և այլն⁵:

Հայկական հրաշապատում հեքիաթների կենտրոնական դեմքը, նրանց հիմնական հերոսը ժողովրդի մարդն է՝ իր ուրույն հոգեբանությամբ ու բնավորությամբ և իր պայքարով: Տարբեր ստեղծագործությունների մեջ նա հանդես է գալիս ու գործում է տարբեր անունների տակ, տարբեր կերպարանքներով: Մի տեղ, օրինակ, դա որսորդի որդին է կամ հենց ինքը՝ որսորդը, մի ուրիշ տեղ՝ հովիվը կամ նրա տղան, իսկ երրորդ տեղ՝ ձկնորսը կամ հողագործ գյուղացին, ուրիշ դեպքերում՝ իմաստուն ջուլհակը, խեղճ ցախահավաքը և այլն: Այդ բոլոր հերոսներն աչքի են ընկնում իրենց ազնվությամբ, բարության, աշխատասիրությամբ, խելքով և համարձակությամբ:

Հայկական հրաշապատում հեքիաթներն ընդունված է բաժանել չորս խմբի. ա) հերոսական հեքիաթներ, բ) ընտանեկան կոնֆլիկտի վրա կառուցված հեքիաթներ, գ) սոցիալ-դասակարգային կոնֆլիկտի վրա կառուցված հեքիաթներ և դ) արխայիկ հեքիաթներ⁶:

Հայկական իրապատում հեքիաթները ևս ունեն իրենց ուրույն սյուժեները, որոնցում արտացոլված են նրանց ժանրային նկարագիրը, բովանդակության ու արվեստի առանձնահատկությունները, հասարակական-գաղափարական միտվածությունը:

Իրապատում հեքիաթների գործող անձինք են ուրիշի հաշվին ապրող աղան, խարդախ վաճառականը, ազահ ու որկրամոլ քահանան, կաշառակեր դատավորը, աշխատասեր կամ ծուլ կանայք ու տղամարդիկ, հավատարիմ կամ դավաճան կանայք, հիմար կամ խելոք եղբայրներն ու քույրերը և այլն:

Հրաշապատում հեքիաթների նման իրապատում հեքիաթների հասարակական-գաղափարական հիմնական բովանդակությունն են ապահով ու երջանիկ կյանքի ժողովրդական երազանքն ու ձգտումը և այն տևական, համառ պայքարը, որ դարերի ընթացքում մղվել է երազանքին հասնելու համար: Տարբերությունը միայն այն է, որ առաջին դեպքում ժողովրդի ձգտումներն իրականանում են գլխավորապես բնության «չար» ուժերի դեմ տարվող պայքարի միջոցով, երկրորդ դեպքում նույն այդ պայքարը

⁵ Դանալանյան Ա. Տ., Հայ ժողովրդական հեքիաթները (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, N 3, էջ 37-39):

⁶ Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 271:

հիմնականում ուղղված է սոցիալական կյանքի «չար» ուժերի դեմ: Երապատում հեքիաթներն ամբողջապես ներթափանցված են աշխատանքային գաղափարախոսությամբ: Աշխատանքն է նրանց բոլորի փոխհարաբերության շարժիչ ուժը⁷:

Ինչ վերաբերում է իսպանական բանահյուսագիտությանը, ապա 1881 թ. Ա. Մաչադո ի Ալվարեսի և Ա. Գիչոտ ի Սիեռայի ջանքերով ստեղծվեց «Անդալուզյան բանահյուսություն» ընկերությունը, որի գործունեությամբ էլ դրվեց բանահյուսության գիտական մոտեցման սկիզբը Իսպանիայում: Թեև Իսպանիան ի հայտ չի եկել որպես համաշխարհային բանահյուսագիտության մեջ լայն արձագանք ստացած որևէ տեսության հայրենիք, սակայն կարևոր դեր է խաղացել եվրոպական և համաշխարհային բանահյուսագիտության, մասնավորապես հեքիաթագիտության պատմության մեջ: Այստեղի բանագետները մեծածավալ աշխատանք են իրականացրել՝ հավաքվել է լայնածավալ նյութ, ստեղծվել և հրատարակվել են բազմահատոր աշխատություններ, բազմաթիվ պարբերականներ, առաջ են քաշվել զանազան մոտեցումներ և մեթոդներ:

Իսպանական բանահյուսության մասին խոսելիս առանձնահատուկ հարկ է ընդգծել հայտնի բանագետներ Ռ. Մենդես Պիդալի և Ալեխանդրո Գիչոտ ի Սիեռայի ներդրումը այդ բնագավառում: Նրանց քննած հիմնախնդիրները հիմնականում վերաբերում են ընդհանուր բանահյուսական հարցերին, որոնք արդիական են նաև հեքիաթագիտության համար: Իսպանացի բանագետների մեծ մասը կարծում է, որ մինչև XIX դարը բանահյուսական տեքստերը գլխավորապես հանդիպում են հեղինակային ստեղծագործությունների մեջ, որպիսիք թույլ չեն տալիս խոսել դրանց հետազոտման գիտական մոտեցման մասին, քանի որ իսպանական բանահյուսագիտությունը սկիզբ է առնում XIX դարից⁸:

1920-1930-ական թվականներին իսպանական բանահյուսության պատմության մեջ սկսվեց բուն գիտական ժամանակաշրջանը: Հատուկ ուշադրության էր արժանանում բանահյուսական նյութի որակը, ընդգծվում էր ժողովրդական խոսքի առանձնահատկությունների պահպանման և փոխանցման կարևորությունը: Հանդես եկան բանավոր տեքստերի դասակարգման ավելի համակարգված մոտեցումներ: Այդ ժամանակաշրջանը սկիզբ առավ Աուրելիո Մ. Էսպինոսայի հեղինակած իսպանական ժողովրդական հեքիաթների ժողովածուների հրատարակմամբ:

Ինչպես հայ, այնպես էլ իսպանական բանահյուսագիտության մեջ հեքիաթը ամենահին ու տարածված ժանրերից է:

Քննության առնենք հայերեն «հեքիաթ» և իսպաներեն «cuento» տերմինները: Այսպես, ըստ Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի», հեքիաթը՝ 1. ժողովրդական բանահյուսության մի տեսակ է, առասպելական արկածներով լի

⁷ Ղանալայան Ա. Տ., նշվ. աշխ., էջ 42-44:

⁸ Baltanás, Enrique. *Peréz Castellano, Antonio José, Literatura oral en Andalucía, Sevilla, 1996.*

դեպքերի պատմություն, 2. սուտ բան, անհավատալի բան, 3. հրաշալի բան, 4. հեքիաթային⁹:

Բսպաներեն «cuento» տերմինը ավելի բազմանշանակ է, քան հայերեն «հեքիաթ» տերմինը: Հայերենում հեքիաթը լինում է գրական և ժողովրդական (բանահյուսական): Բսպաներենում «cuento» տերմինը կարող է նշանակել ոչ միայն հեքիաթի ժանր, այլև «պատմվածք»՝ պատմություն իրական և մտացածին իրադարձությունների մասին, որն իր հերթին կարող է նաև ժողովրդական (բանահյուսական) կամ գրական ծագում ունենալ: Ընդ որում, կարևոր է նշել, որ «cuento»-ն բանահյուսական հեքիաթ հասկացությունն արտահայտող ոչ միակ հնարավոր եզրույթն է և շրջանառության մեջ է մտել համեմատաբար ուշ: Այն ծագել է *computare* «հաշվել» լատիներեն բառից և առաջին անգամ հիշատակվել 1080 թվականին: Միջնադարում ի հայտ է գալիս *cuento*-ի ևս մեկ իմաստ՝ «պատմել, փոխանցել իրադարձությունները»:

«Cuento» բառը առնչվում է «contar» բայի հետ և ենթադրում է ինչպես ճշմարտացի, այնպես էլ մտացածին բանավոր պատմություն: Սակայն XVII դ. սկսած՝ աստիճանաբար այն առավելապես դասվում է մտացածին պատմվածքի շարքին:

Այլ բանահյուսական և գրական ժանրերից իսպանական հեքիաթի տարբերության սահմանումը տվել են իսպանացի ուսումնասիրողներ Խ. Կամարենոն և Մ. Չևալիերին. «Այսպիսով, կարելի է ասել, որ ի տարբերություն ռոմանսերոյի և բանաստեղծական ժողովրդական ստեղծագործության, ժողովրդական հեքիաթը արձակ ստեղծագործություն է, որը պատմում է գործողությունների մասին՝ դրանց ենթարկելով բոլոր նկարագրական միջոցները: Հեքիաթը դրանով է տարբերվում ավանդազրույցից: Քանի որ հեքիաթը բանավոր ավանդույթի ժանր է, դրանում ներկայացվում են մշտապես կերպափոխվող մտացածին գործողություններ, ըստ այդմ, հեքիաթը տարբերվում է նաև վեպից և գրավոր գրականության այլ ժանրերից: Փոփոխվելու այս ունակությունն էլ նրան տարբերում է նաև առակներից և այլ ավանդական բանաձևային ժանրերից»¹⁰:

Ուշագրավ է մի շարք իսպանացի ուսումնասիրողների կարծիքը իսպանական բանավոր ավանդույթի շրջանակում հեքիաթի ժանրին բնորոշ առանձնահատկությունների մասին: Այսպես, Խոսե Մարիա Գելբենսուն առանձնացնում է իսպանական ժողովրդական հեքիաթի ժանրին բնորոշ հետևյալ հատկանիշները. «Այդ հեքիաթներն առաջին հերթին աչքի են ընկնում իրենց ռեալիզմով: Դրանցում հնարամտությունն ավելի է գնահատվում, քան խելքը, իսկ հերոսների հարաբերությունները բնութագրվում են չափազանց ոչ պաշտոնական ոճով»¹¹: Նա ընդգծում է նաև իսպանացի հեքիաթասացների ձգտումը դեպի ցանկացած իրավիճակների լուծման՝ հրաշքի կամ հրաշալի օգնականի միջոցով: Դա

⁹ Sté u Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969:

¹⁰ Camarena J., Chevalier M. Catálogo tipológico del cuento folklórico español, Madrid, 1995, p. 9.

¹¹ Guelbenzu J. M. Cuentos populares españoles, Madrid, 2000, p. 17.

հատկապես վերաբերում է “*cuentos de encantamiento o maravillosos*” (հրաշապատում) հեքիաթներին, որտեղ այս կամ այն նպատակի իրականացման համար առաջարկվում են կախարդական առարկաներ: Իսպանական ժողովրդական հեքիաթների հաջորդ կարևոր հատկանիշը անսպասելի ավարտն է, երբ թվում է, թե հեքիաթասացը ցանկանում է շուտափույթ «ազատվել» իր պատմածից առանց վերջնական եզրահանգումներ անելու¹²:

Այսպիսով, բանահյուսական հեքիաթի ժանրը տարբեր կերպ է ընկալվում զանազան բանահյուսագիտական ավանդույթների շրջանակներում: Հեքիաթի ժանրային դասակարգման հիմքում ընկած են ամենատարբեր չափանիշներ և գիտական մոտեցումներ:

Դասակարգման առավել տարածված տեսակը հիմնվում է երևակայության բնույթի, գեղարվեստական պայմանականության աստիճանի վրա: Այդ պատճառով իսպաներենում, ինչպես և հայերենում ընդունված է հեքիաթները բաժանել հետևյալ կերպ. ա) կենդանիների մասին, բ) հրաշապատում (երևակայական), գ) կենցաղային (կամ նորավեպային, իրատեսական):

Իսպանացի բանագետներն առաջարկում են բանահյուսական հեքիաթի ժանրերի տարբեր բաժանումներ: Այսպես, Կ. Գարվայո-Նետոն առաջնորդվում է դասակարգման հետևյալ սկզբունքով՝ 1. *Cuentos de encantamiento* (հրաշապատում հեքիաթներ), 2. *Cuentos de ejemplo* (խրատական հեքիաթներ), 3. *Cuentos de animales* (կենդանիների մասին հեքիաթներ), 4. *Chistes*, (անեկդոտներ), 5. *Cuentos religiosos* (կրոնական հեքիաթներ), 6. *Cuentos etnológicos* (ազգագրական հեքիաթներ), 7. *Cuentos de demonio engañado*, (խաբված դևի մասին հեքիաթներ), 8. *Cuentos de adivinanza* (հանելուկ հեքիաթներ), 9. *Cuentos acumulativos* (հավաքական հեքիաթներ), 10. *Cuentos del ciclo de la muerte* (մահվան շրջափուլի հեքիաթներ)¹³:

Հատկապես ուշագրավ է Աուրելիո Մ. Էսպինոսա հոր՝ հեքիաթի ժանրային բաժանումը, որը իսպանական հեքիաթներն ըստ բովանդակության բաժանել է 6 խմբի՝ *Cuentos de Adivinanzas* (հանելուկ հեքիաթներ), *Cuentos Humanos Varios* (մարդկային կյանքին առնչվող հեքիաթներ), *Cuentos Morales* (բարոյական հեքիաթներ), *Cuentos de Encantamiento* (հրաշապատում հեքիաթներ), *Cuentos Picarescos* (պիկարոյական հեքիաթներ), *Cuentos de Animales* (կենդանիների մասին հեքիաթներ)¹⁴:

Էսպինոսա որդու աշխատությունները հիմնականում նվիրված են Գաստիյա և Լեոնի հեքիաթային նյութին: Նա իր հավաքած տեքստերը բաժանում է հետևյալ կերպ. առաջին հատորում ներառված են 4 տեսակի հեքիաթներ՝ *Cuentos de Brujas* (վիուկների մասին), *Cuentos de Animales* (կենդանիների մասին), *Cuentos de Encantamiento* (հրաշապատում), *Cuentos Ejemplares y Morales* (բարոյախրատական):

¹² Նույն տեղում, էջ 19:

¹³ Paulo de Carvalho-Neto. *Concepto de folklore, México, 1965, p.30.*

¹⁴ Espinosa, Aurelio M. *Cuentos populares de España, Madrid, 1965, p. 25.*

երկրորդում ներկայացված են հետևյալ հեքիաթները՝ *Cuentos Novelescos* (նորավեպային), *Cuentos de Ogros* (հրեշների մասին), *Chistes y Aneadotas* (անեկդոտներ), *Cuentos de Formulas Fijas* (հստակ բովանդակությամբ)¹⁵:

Բսպաներենում «հրաշապատում հեքիաթ» տերմինն ունի մի քանի համարժեք:

Առաջին՝ շատ ուսումնասիրողներ գործածում են “*Cuento de encantamiento*” բառակապակցությունը, որում *encantamiento* բառը կարող է ունենալ կախարդանք, հմայք, երդում, ուխտ, զրպարտանք իմաստը: Այստեղ ընդգծվում է հեքիաթի պոլիթեում արտասովոր շրջադարձերի, հերոսների վրա գերբնական ուժերի ազդեցության առկայությունը, ինչպես նաև հերոսի հատուկ շնորհն ու նրա ճակատագրի կանխորոշվածությունը:

Երկրորդ՝ հաճախ կարելի է հանդիպել “*cuentos de Hadas*” հրաշապատում հեքիաթների, որոնցում գործող անձանց մեջ հիմնականում շեշտված է “*Hada*”-ի՝ հրաշագործ գերբնական կնոջ, բարի կնքամոր կերպարը: Սակայն ինչպես նշում են իսպանացի բանագետները՝ “*Hada*” -ն իսպանական հեքիաթներում հազվադեպ հանդիպող կերպար է, ինչի հետևանքով նման բառակապակցությունը քիչ է գործածվում¹⁶:

Երրորդ՝ հարկ է նշել, որ հրաշապատում հեքիաթներում հաճախ օգտագործվում են “*magia*” (կախարդանք) գոյականը և “*mágico*” (կախարդական) ածականը: Այսպես, օրինակ, հեքիաթային բոլոր առարկաներից ամենակախարդականը՝ փայտիկը, կարող է անվանվել “*varita mágica*” (կամ *varita de virtud*):

Չորրորդ՝ հենց “*magia*” բառի հետ ուղղակի իմաստով կապված են “*magia propiamente dicha*” հեքիաթները, որոնցում հատուկ դեր ունի կախարդանքը՝ “*hechicería*”-ն: “*Hechicero*” ածականը դասվում է “*mágico*”, *hechicero*”, “*encantado*” հոմանիշների շարքին՝ ցույց տալով, որ հեքիաթում գործում է կախարդ, վիճակ կամ իր գործառնություններով նման այլ կերպար:

Հինգերորդ՝ իսպանական ժողովրդական հեքիաթներում հաճախ հանդիպում է “*Cuentos maravillosos*” (հրաշապատում հեքիաթներ) բառակապակցությունը, որում “*maravilloso*” ածականն ընդգծում է հեքիաթի թողած տպավորությունը ունկնդրի վրա, այսինքն՝ այն գնահատվում է հասցեատիրոջ տեսանկյունից: Սակայն նշյալ ածականն ընթերցողը երբեմն թյուրիմացաբար առաջին հերթին ընկալում է “*estupendo, magnífico, maravilloso*” (հրաշալի) նշանակությամբ:

Բսպանացի բանագետների աշխատություններում կարելի է հանդիպել նաև “*Cuentos fantásticos*” և “*Cuentos de héroes*” անվանումներին, որոնք, ի տարբերություն “*cuentos maravillosos*” -ի, լայն գործածում չունեն: Անտոնի Ռոդրիգես Ալմոդովարը ժողովրդական հեքիաթին նվիրված իր աշխատության մեջ հանգամանալից անդրա

¹⁵ Espinosa, Aurelio M., hijo, *Cuentos populares de Castilla y León, Madrid, 1987-1988, p. 35.*

¹⁶ *Cuentos extremeños maravillosos y de encantamiento, Badajoz, 1997, p. 42.*

դառնում է իսպանական կախարդական հեքիաթների դասակարգմանը: Նա առանձնացնում է հեքիաթների 3 հիմնական խմբեր՝ “maravillosos” (հրաշապատում), “de costumbres rurales” (կենցաղային), “de animales” (կենդանիների մասին): Բանագետի կարծիքով այդ խմբերը բաժանվում են 6 հիմնական տեսակների՝ *La adivinanza del pastor* (Հովվի գուշակությունը), *Blancaflor* (Սպիտակ ծաղիկը), *La hija del diablo* (Մատանայի դուստրը), *El príncipe encantado* (Կախարդված արքայազնը), *Juan el oso* (արջ Խուանը), *La princesa encantada* (Կախարդված արքայադուստրը): Միաժամանակ նա ներմուծում է շրջափուլ հասկացությունը՝ առանձնացնելով իսպանական հրաշապատում հեքիաթների 12 շրջափուլ՝ *Blancaflor* (Սպիտակ ծաղիկը), *Juan el oso* (արջ Խուանը), *El príncipe encantado* (Կախարդված արքայազնը), *La princesa encantada* (Կախարդված արքայադուստրը), *La princesa y el pastor* (Արքայադուստրը և հովիվը), *Las tres maravillas del mundo* (Ստիսահի երեք հրաշալիքները), *La niña perseguida* (Հալածված երեխան), *Los niños valientes* (Խիզախ երեխաները), *El muerto agradecido* (Երջանիկ հանգուցյալը), *Seres mitológicos* (Առասպելական արարածները), *La ambición castigada* (Դատապարտված փառասիրությունը), *La muerte* (Մահը):

Հրաշապատում հեքիաթի ժանրի համեմատությամբ կենցաղային հեքիաթի ժանրն ունի ավելի թույլ արտահայտված սահմաններ: Կենցաղային հեքիաթի ներքո սովորաբար ընկալվում են առօրյա բովանդակություն պարունակող և տեղական կենցաղային երանգավորմամբ հեքիաթները: Ի տարբերություն կախարդական հեքիաթների՝ կենցաղային հեքիաթները չունեն հստակ սյուժետային կառուցվածք, որն էլ դժվարացնում է դրանց դասակարգումը: Իսպանացի բանագետներն առանձնացնում են հեքիաթի այն ժանրերը, որոնք, իրենց տեսակով համապատասխանելով հայրենական ավանդույթին, կարող են որոշակիորեն առնչվել կենցաղային հեքիաթին:

Կենցաղային հեքիաթները կարող են ընդգրկել “*Cuentos Ejemplares y Morales*” (բարոյախրատական հեքիաթներ), “*Cuentos Picarescos*” (պիկարոյական հեքիաթներ), “*Chistes y Anecdotas*” (անեկդոտներ), “*Cuentos de Formulas Fijas*” (հստակ բովանդակությամբ հեքիաթներ) հեքիաթային ժանրերը:

Ըստ Նևես Գոմես Լոպեսի՝ կենցաղային հեքիաթների տարատեսակներից հատուկ ուշադրության են արժանի “*Cuentos de bobo o tonto*” (հիմարների մասին հեքիաթները), որոնք կենցաղային բնույթ ունեն և արտացոլում են մարդկային կենցաղի ծիծաղելի և անհեթեթ կողմերը, ծիծաղաշարժ իրավիճակներն ու

մարդկային հիմարությունները¹⁷:

Ա. Է. Ալմոդովարն իր վերոհիշյալ աշխատության մեջ, բացի արդեն վերը հիշատակված հրաշապատում հեքիաթների շրջափուլերից, առանձնացնում է կենցաղային հեքիաթների հետևյալ շրջափուլերը՝ *Niños en peligro* (վտանգի մեջ գտնվող երեխաներ), *Picaros* (խաչագողներ), *De pobres y ricos* (աղքատներ և հարուստներ), *Mujeres difíciles* (քմահաճ կանայք), *Tontos* (հիմարներ), *Cuentos de Miedo* (սարսափ ժանրի հեքիաթներ): Նա, կենցաղային հեքիաթներն անվանելով «*Cuentos de Costumbres (de costumbres rurales)*», տալիս է դրանց հետևյալ սահմանումը. «Դրանք արտացոլում են հողագործական համայնքի աշխարհայացքը՝ հանդես գալով նման ապրելակերպի գովաբանությամբ կամ քննադատությամբ, չեն պարունակում երևակայության տարրեր, բացառությամբ այն տարրերի, որոնք փոխառված են հրաշապատում հեքիաթներից»¹⁸:

Խուան Ռոդրիգես Պաստորը, անդրադառնալով իսպանական կենցաղային հեքիաթի ժանրին, ընդգծում է, որ այն հեքիաթների ամենաանորոշ տեսակն է: Դրանք կարող են տարբեր անվանումներ ունենալ՝ «*cuentos realistas*» (իրատեսական հեքիաթներ), «*cuentos novelescos*» (նորավեպային հեքիաթներ), «*cuentos costumbristas*» (ավանդապաշտ հեքիաթներ)¹⁹:

Բսպանացի գիտնականները, ընդգծելով հեքիաթի բարոյախրատական դերը, մշտապես կարևորել են նրա դերը մարդկության առաջընթացում. «Ոչ մի ժանր չի ունեցել ճակատագրի այդքան շրջադարձեր, գաղտնիքներ, որոնք բաժին են հասել հեքիաթին: Քիչ ժանրեր են նման ձևով ծառայել մշակութային գործընթացին, և ոչ մեկը չի հասել այդպիսի արդյունքների: Մարդկային ուղեղում տպավորվում էին ոչ միայն սխրագործությունները, այլև կենցաղային պատահարները, բնության երևույթները, որոնց տրվում էին ամենազանազան մեկնաբանություններ: Այդ ամենը զարմանքի և հիացմունքի առիթ է հանդիսացել»²⁰:

Այսպիսով, թե՛ հայ և թե՛ իսպանական բանահյուսության մեջ հեքիաթը ամենահին ու տարածված ժանրերից է: Ինչպես աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթները, այնպես էլ հայկական ու իսպանական հեքիաթները հիմնականում բաժանվում են երեք տեսակի՝ կենդանական հեքիաթներ, հրաշապատում և իրապատում (կենցաղային), որոնցից դասական տեսակը հրաշապատում հեքիաթներն են: Միաժամանակ երկու ժողովուրդների հեքիաթները աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններով: Հայկական հեքիաթներում հիմնականում արտացոլված են մեր ժողովրդի պատմական զարգացման ընթացքը, նրա աշխարհայացքն ու աշխարհընկալումը: Դրանցում մեծ մասամբ գլխավոր հերոսը մարդն է՝ իրեն բնորոշ հոգեբանությամբ, բնավորությամբ և պայքարով: Իսպանական

¹⁷ Gómez López Nieves. *Cuentos de transmisión oral del poniente almeriense*, Madrid, 1998.

¹⁸ Rodríguez Almodóvar Antonio. *Los cuentos populares o la tentativa de un texto infinito*, Murcia, 1989, p. 202.

¹⁹ Rodríguez Pastor Juan. *Cuentos extremeños de costumbres*, Badajoz, 2002.

²⁰ *Cuentos españoles*, La Habana, 1968.

հեքիաթները հիմնականում աչքի են ընկնում ռեալիզմով, որոնցում առավելապես գնահատվում է հնարամտությունը: Դրա հետ մեկտեղ այստեղ գերիշխում են նաև հրաշքն ու կախարդանքը: Այդ հեքիաթներին հատկանշական է նաև անսպասելի ավարտը: Հարկ է նշել նաև, որ երկու ժողովուրդների գրեթե բոլոր հեքիաթներում դրսևորվում է բարու հաղթանակը չարի նկատմամբ:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ЖАНРА СКАЗКИ В ИСПАНСКОМ И АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

АЗИЗБЕКЯН З. Р.

Резюме

Сказка – один из древнейших видов эпического фольклора, в котором в художественной форме отражены представления народа о жизни и человеческих отношениях. Сказанное характерно также для армянских и испанских народных сказок, которые классифицируются как волшебные, бытовые и сказки о животных. В фольклорах этих двух народов можно найти как черты, роднящие их с другими культурами, так и черты, присущие только им. Сказочный жанр присутствует в фольклоре различных народов, являясь достоянием общемировой культуры.